«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1, հեռ.՝ (+374-60) 71-01-31, ներքին՝ 11-31, էլհասցե՝ www.ysu.am, board@ysu.am

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2025 թ. մայիսի 13-ին հարցման կարգով անցկացված թիվ 1 նիստի

ք. Երևան **13.05.2025 թ.**

2025 թվականի մայիսի 13-ին հարցման կարգով անցկացվել է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2025 թվականի թիվ 1 նիստը: Քվեարկությանը մասնակցել են ՀՀ վարչապետի 2021 թ. հոկտեմբերի 28-ի թիվ 1222-Ա որոշմամբ հաստատված՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 20 անդամներից 20-ը (քվեաթերթիկները կցվում են):

Հարցման կարգով անցկացվող Խորհրդի նիստի օրակարգում ընդգրկված հարցերը հետևյալն են.

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամին անհատույց օգտագործման իրավունքով հանձնված տարածքների (անշարժ գույքի) մի մասը վարձակալության տրամադրելու վերաբերյալ ռեկտորի առաջարկության հաստատում և ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե հայտի ներկայացում:

2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կողմից կնքված մեկ հարյուր միլիոն ՀՀ դրամի սահմանաչափը գերազանցող պայմանագրերի հաստատում:

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամին անհատույց օգտագործման իրավունքով հանձնված տարածքների (անշարժ գույքի) մի մասը վարձակալության տրամադրելու վերաբերյալ ռեկտորի առաջարկության հաստատում և ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե հայտի ներկայացում:

Առցանց եղանակով օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ անցկացված քվեարկության արդյունքները հետևյալն են. **կողմ՝ 20, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:**

Քվեարկության արդյունքներով ընդունվեց որոշում՝ հետևյալ բովանդակությամբ.

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի թիվ 914-Ն որոշմամբ հաստատված «Պետական ոչ առևտրային կազմակերպություններին, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին և հիմնադրամներին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության տրամադրման կարգի» 4-րդ կետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 43-րդ կետի 23-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը **որոշում է.**

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի առաջարկությունը՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամին անհատույց օգտագործման իրավունքով հանձնված՝ Երևան քաղաքի Ալեք Մանուկյան 1 հասցեում գտնվող տարածքի (անշարժ գույքի) մի մասը (12 քմ, և 31,7 քմ մակերեսներով) և Երևան քաղաքի Աբովյան 52 հասցեում գտնվող տարածքի (անշարժ գույքի) մի մասի (118,2 քմ մակերեսով) վարձակալության տրամադրելու վերաբերյալ և հայտ ներկայացնել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտե:1) Կանոնակարգի 2.2 կետում «առնվազն 40 օր առաջ, ռեկտորի» բառերը փոխարինել «առնվազն 30 օր առաջ, տնօրենի» բառերով,

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կողմից կնքված մեկ հարյուր միլիոն ՀՀ դրամի սահմանաչափը գերազանցող պայմանագրերի հաստատում:

Առցանց եղանակով օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ անցկացված քվեարկության արդյունքները հետևյալն են. **կողմ՝ 15, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 5:**

Քվեարկության արդյունքներով ընդունվեց որոշում՝ հետևյալ բովանդակությամբ.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 43-րդ կետի 20-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը **որոշում է**.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար ԵՊՀ աշխատակիցների առողջապահական ապահովագրության ծառայությունների մատուցման թիվ ԵՊՀ-ՀԲՄՁԲ-25/3 պայմանագիրը:

2. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար կապալային աշխատանքների կատարման թիվ ԵՊՀ-ՀՄԱՇՁԲ-24/3 պայմանագիրը:

3. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի և «ԻՆՔՈՐ» ՓԲԸ-ի միջև 02.05.2025թ. կնքված պետական պարտատոմսերի ձեռք բերման պայմանագիրը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Խորհրդի նախագահ՝ **Ս. Պապիկյան**